


МЕНЕДЖМЕНТ

Աշխատուժի պահանջարկի գնահատումը ՀՀ-ում՝ ըստ կրթական մակարդակների և վարչատարածքային միավորների (դաշտային աշխատանքների վերլուծություն)


Աղաջանյան Սուսաննա Ս.

տ.գ.թ., Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ավագ դասախոս, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0002-5469-3995>
susy_agadjanyan@yahoo.com


Վարդանյան Տարևիկ Գ.

տ.գ.թ., Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ավագ դասախոս, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0001-6488-2717>
tatev.vardanyan@outlook.com


Բադալյան Մերի Վ.

տ.գ.թ., դոցենտ, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի ղեկավար, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0002-7128-1968>
badalyanmeri.asue@gmail.com

Մաթևոսյան Էլիզա Լ.

«Հանրային կառավարում» մասնագիտության մագիստրոս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0004-5887-0225>
matevosyaneliza5@gmail.com

ՀՏԳ՝ 331.5; EDN: YKVVQSE; JEL: J23

DOI: 10.58587/18292437-2025.1-176

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ աշխատուժի պահանջարկ, կրթական մակարդակ, դաշտային աշխատանք, վարչատարածքային միավորներ, ՀՀ

Оценка спроса на рабочую силу в Армении по уровням образования и административным единицам: анализ полевых исследований

Աղաջանյան Սուսաննա Ս.

к.э.н., старший преподаватель кафедры международных экономических отношений, Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Վարդանյան Տարևիկ Գ.

к.э.н., старший преподаватель кафедры международных экономических отношений, Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Բադալյան Մերի Վ.

к.э.н., доцент, декан факультета бухгалтерского учета и аудита, Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Մաթևոսյան Էլիզա Լ.

магистрант по специальности «Государственное управление», Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Аннотация. Основная цель данной статьи – оценить и проанализировать спрос на рабочую силу в Армении по уровням образования и административным единицам. Основным источником данных для исследования является масштабная полевая работа, включающая 7 270 организаций из различных отраслей. Исследование показало, что 47,4% сотрудников в этих организациях имеют высшее или послевузовское образование, тогда как по официальной статистике этот показатель составляет 32,6%. Аналогичное несоответствие отмечается и в спросе на профессиональное образование: по полевым данным он составляет 26,5%, тогда как по официальным данным – 19,9%. Региональные различия также значительны: большая часть высококвалифицированной рабочей силы сосредоточена в Ереване, тогда как в таких регионах, как Вайоц Дзор и Гегаркуник, наблюдается более высокая доля работников с низким уровнем образования. В статье также оценивается дополнительный спрос на труд по состоянию на июль 2024 года, выявлено, что требуется 17 589 работников, из которых 69,2%

нужны в Ереване. Основные выводы подчеркивают наличие хронического дисбаланса на рынке труда, проявляющегося в различных уровнях квалификации. В этом контексте подчеркивается важность программ развития рабочей силы, согласования образовательных систем с потребностями рынка и реализации специальных политик для устранения региональных дисбалансов. Кроме того, необходимо развитие навыков и согласование образовательных квалификаций с требованиями рынка для укрепления экономической конкурентоспособности Армении.

Ключевые слова и словосочетания: спрос на труд, уровень образования, полевая работа, административные единицы, Республика Армения

Assessment of Labor Demand in Armenia by Educational Levels and Administrative Divisions: Analysis of Fieldwork

Aghajanyan Susanna S.

Ph.D., Senior Lecturer at the Department of International Economic Relations, Armenian State University of Economics (Yerevan, RA)

Vardanyan Tatevik G.

Ph.D., Senior Lecturer at the Department of International Economic Relations, Armenian State University of Economics (Yerevan, RA)

Badalyan Meri V.

Ph.D., Associate Professor, Dean of the Faculty of Accounting and Auditing, Armenian State University of Economics (Yerevan, RA)

Matevosyan Eliza L.

Master's Student in "Public Administration" at the Armenian State University of Economics (Yerevan, RA)


Abstract. The main objective of this article is to evaluate and analyze labor demand in Armenia based on educational levels and administrative divisions. The primary data source for the study is extensive fieldwork involving 7,270 organizations from various sectors. The research revealed that, according to field data, 47.4% of employees in these organizations have higher or postgraduate education, compared to 32.6% according to official statistics. A similar disparity was noted in the demand for vocational education: field data show a rate of 26.5%, while official statistics indicate 19.9%. Regional differences are also significant: the majority of highly qualified labor is concentrated in Yerevan, whereas in regions such as Vayots Dzor and Gegharkunik, there is a higher proportion of workers with lower educational levels. The article also estimates the additional labor demand as of July 2024, identifying a need for 17,589 workers, 69.2% of whom are required in Yerevan. The key findings highlight chronic imbalances in the labor market, manifesting across various qualification levels. In this context, the importance of workforce development programs, alignment between educational systems and market demands, and the implementation of specific policies to address regional disparities is underscored. Additionally, the necessity for skill development and the alignment of educational qualifications with market requirements is critical for strengthening Armenia's economic competitiveness.

Keywords & phrases: labor demand, educational level, fieldwork, administrative divisions, Republic of Armenia

Հայաստանի աշխատուժի պահանջարկի համապարփակ և գնահատման համար առանցքային նշանակություն ունի առաջնային տեղեկատվության հավաքագրումը, որն իրականացվել է դաշտային աշխատանքների միջոցով: Հարցումներ են իրականացվել պետական և մասնավոր հատվածի գործատուների շրջանում, որի նպատակն է գնահատել, թե ըստ կրթական մակարդակի՝ ինչպիսի աշխատուժի պահանջարկ է առկա հայաստանյան գործատուների մոտ: Դաշտային աշխատանքները հնարավորություն են խորքային գնահատել գործատուների անմիջական պահանջները և ակնկալիքները, բացահայտել այն ոլորտները, որտեղ կա կադրային սուր պակաս, ինչպես նաև հասկա-

նալ, թե ինչպիսի մասնագիտական հմտություններ և փորձ են ակնկալում գործատուները տարբեր կրթական մակարդակների աշխատակիցներից:


Հոդվածի հեղինակների կողմից իրականացված դաշտային աշխատանքներին մասնակցել են 7270 կազմակերպություններ: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2024 թվականի հուլիս ամսին Հայաստանում գրանցված կազմակերպությունների թիվը կազմել է 69536, ինչը դաշտային աշխատանքներին մասնակցած կազմակերպությունների 11%-ն է (ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարան):



Գծապատկեր 1. Դաշտային աշխատանքներին մասնակցած կազմակերպությունների տեսակարար կշիռն՝ ըստ գործունեության ոլորտների (%)

Սա հնարավորություն է տալիս դաշտային աշխատանքների հիման վրա աշխատուժի պահանջարկի գնահատման հիմնական արդյունքները տարածել Հայաստանում առկա միտումների վրա: Ընդ որում, 30.1% կազմակերպություն գործունեություն են ծավալում պետական կառավարման, կրթության, առողջապահության և բնակչության սոցիալական ապասարկման, 18.7% կազմակերպություն՝ առևտրի, նորոգման, փոխադրումների և պահեստային տնտեսության, 10.9% կազմակերպություն՝ գյուղատնտեսության և այլ ոլորտներում: Դաշտային աշխատանքներին մասնակցած կազմակերպությունների ոլորտային բաշխվածությունը ներկայացված է գծապատկեր 1-ում:

Հարցմանը մասնակցած 7270 ռեսպոնդենտ կազմակերպությունների 28.3%-կամ 2057-ը գործունեություն են ծավալում Երևանում: Մասնակիցների թվով հաջորդը Շիրակի մարզն է, որտեղ գործունեություն են ծավալում հարցման մասնակցած կազմակերպությունների 10.5%, ապա Լոռու և Կոտայքի մարզերը՝ 8.4-ական տոկոս: Միևնույն ժամանակ, հարցմանը մասնակցած ամենաքիչ թվով կազմակերպություններն արձանագրվել են Վայոց ձորի (2.5%), Արարատի և Տավուշի (5.7-ական տոկոս) մարզերում: Հատկանշական է, որ հարցման մասնակցած կազմակերպությունների մոտ 18%-ը կամ 1309 կազմակերպություն գործունեություն են ծավալում ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ որևէ այլ մարզերում:



Գծապատկեր 2. Կազմակերպություններն՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների (%)

Աշխատուժի ընթացիկ պահանջարկի գնահատման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի ինչպես դաշտային աշխատանքների արդյունքներով, այնպես էլ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա աշխատողների թվի վերլուծությունը: Այսպես, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2023 թվականի դեկտեմբեր ամսին ՀՀ-ում գործող ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կազմակերպություններում գրանցված աշխատողների թիվը կազմել է 741572 մարդ (ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական

շտեմարան): Դաշտային աշխատանքներին մասնակցած կազմակերպություններում աշխատողների թիվը 2023 թվականի վերջին կազմել է 195431 մարդ, որը ՀՀ վիճակագրական կոմիտեում առկա տվյալների 26.4%-ն է կազմում: Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց է տալիս աղյուսակ 1-ում առկա տվյալների վերլուծությունը, դաշտային աշխատանքներին մասնակցած կազմակերպություններում գրանցված աշխատողների 74.2%-ը կամ 145039 աշխատող Երևանից են, 4.9 %-ը կամ 9578 աշխատող՝ Կոտայքից և այլն:


Աղյուսակ 1. Ըստ ՀՀ վարչատարածքային միավորների աշխատուժի ընթացիկ պահանջարկն ու դրա տեսակարար կշիռը պաշտոնական վիճակագրությանը և դաշտային աշխատանքների արդյունքներով

	ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով		Դաշտային աշխատանքների տվյալներով	
	Աշխատուժի ընթացիկ պահանջարկը	Տեսակարար կշիռը	Աշխատուժի ընթացիկ պահանջարկը	Տեսակարար կշիռը
Երևան	521318	70.3	145039	74.2
Արագածոտն	12470	1.7	2933	1.5
Արարատ	27285	3.7	5473	2.8
Արմավիր	26085	3.5	6060	3.1
Գեղարքունիք	17249	2.3	4547	2.3
Լոռի	28316	3.8	5278	2.7
Կոտայք	38995	5.3	9578	4.9
Շիրակ	25609	3.5	6750	3.5
Սյունիք	24010	3.2	5473	2.8
Վայոց ձոր	6820	0.9	1368	0.7
Տավուշ	13414	1.8	2932	1.5
Ընդամենը	741571		195431	


Հետազոտության շրջանակներում համեմատական վերլուծություն է իրականացվել ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով զբաղվածների թվաքանակի և դաշտային աշխատանքների արդյունքներով աշխատողների թվաքանակի ցուցանիշների միջև՝ ըստ առանձին կրթական մակարդակների: Այսպես, ստացվել է, որ համաձայն ՀՀ պաշտոնական վիճակագրության աշխատուժի ընթացիկ պահանջարկի մեջ (այս պարագայում՝ զբաղվածների թվաքանակ) 32.6%-ն ունեցել են բարձրագույն և հետբուհական կրթություն: Մինևույն ժամանակ, դաշտային աշխատանքների արդյունքներով բացահայտվել է, որ բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցել են կազմակերպությունների աշխատողների 47.4%-ը կամ 92724 մարդ:

Համաձայն պաշտոնական վիճակագրության՝ միջին մասնագիտական կրթություն ունեցել են աշխատուժի ընթացիկ պահանջարկի 19.9%-ը, իսկ դաշտային աշխատանքների արդյունքներով՝ 26.5%-ը կամ 51737 մարդ: Պաշտոնական վիճակագրությամբ՝ նախամասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցել են աշխատուժի ընթացիկ պահանջարկի 3.2%-ը, իսկ դաշտային աշխատանքների արդյունքներով՝ 5.2%-ը կամ 10160 մարդ: Իսկ միջնակարգ/հիմնական ընդհանուր և ցածր կրթություն պաշտոնական վիճակագրության համաձայն ունեցել են աշխատուժի ընթացիկ պահանջարկի 44.2%-ը, իսկ դաշտային աշխատանքների տվյալներով՝ 20.9%-ը կամ 40811 մարդ:

Երևանում աշխատողների 52%-ը կամ 75420 աշխատող ունեցել են բարձրագույն և հետբուհական կրթություն: Հատկանշական է, որ Երևանին մոտ գտնվող մարզերում նույնպես բարձրագույն, հետբուհական կրթություն ունեցողների տեսակարար կշիռն աշխատողների մեջ բարձր է: Այսպես, օրինակ Կոտայքի մարզում 4502 մարդ կամ 47%-ն են ունեցել բարձրագույն, հետբուհական կրթություն, Արմավիրի մարզում՝ 2606 մարդ կամ 41%-ը և այլն: Սյուս կողմից, բարձրագույն, հետբուհական կրթություն ունեցող աշխատողների ցուցանիշները բավական ցածր են Վայոց ձորի (260 մարդ կամ 19%), Գեղարքունիքի (955 մարդ կամ 21%) և Սյունիքի (1314 մարդ կամ 24%) մարզերում:




Փձապատկեր 3. Ըստ կրթական մակարդակների աշխատուժի ընթացիկ պահանջարկի տեսակարար կշիռը պաշտոնական վիճակագրությամբ և դաշտային աշխատանքների արդյունքներով



Փձապատկեր 4. Կազմակերպություններում աշխատուժի ընթացիկ պահանջարկն ըստ կրթական մակարդակների և << վարչատարածքային միավորների

Միջին մասնագիտական կրթություն ունեցող աշխատողները Երևանում կազմել են ընդհանուր աշխատողների 26%-ը կամ 37710 մարդ: Միջին մասնագիտական կրթություն ունեցող աշխատողների թվաքանակով դաշտային աշխատանքների արդյունքներով ամենամեծ տեսակարար կշիռն ունեցող մարզերն են Մյունիքի (2025 մարդ կամ 37%), Արարատի (1916 մարդ կամ 35%) և Արագածոտնի (909 մարդ կամ 31%) մարզերը: Մյուս կողմից, միջին մասնագիտական կրթություն ունեցող աշխատողների ամենացածր թվաքանակն արձանագրվել է Գեղարքունիքի (682 մարդ կամ 15%),

Վայոց ձորի (233 մարդ կամ 17%) և Լոռու (1108 մարդ կամ 21%) մարզերում: Միջնակարգ/հիմնական ընդհանուր և ցածր կրթություն ունեցող աշխատողներն ամենաշատն արձանագրվել են Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերում՝ 61-ական տոկոս, կամ համապատասխանաբար 834 աշխատող և 2774 աշխատող: Մյուս կողմից, ամենաքիչը միջնակարգ/հիմնական ընդհանուր և ցածր կրթություն ունեցող աշխատողներն առկա են Երևանում (24657 մարդ կամ 17%), Կոտայքում (1724 մարդ կամ 18%) և Արագածոտնում (587 մարդ կամ 20%):




Պատկեր 5. Կազմակերպություններում աշխատուժի ընթացիկ պահանջարկի տեսակարար կշիռներն՝ ըստ կրթական մակարդակների << վարչատարածքային միավորներում

Այսպիսով, վարչատարածքային միավորումների մասով արձանագրվել են հստակ անհավասարակշռություններ ըստ կրթական մակարդակների բաշխվածության առումով: Երևանում բարձրագույն, հետրուհական կրթությամբ աշխատողների թիվը զգալիորեն բարձր է, ինչը վկայում է մայրաքաղաքի կենտրոնացած աշխատաշուկայի մասին, որտեղ պահանջարկ կա բարձր որակավորում ունեցող մասնագետների: Մյուս մարզերում, մասնավորապես Վայոց ձորում և Գեղարքունիքում, ցածր կրթական մակարդակ ունեցող աշխատողների տեսակարար կշիռը զգալիորեն բարձր է, ինչը ցույց է տալիս տարածաշրջանային անհավասարություն կրթական մակարդակների պահանջարկի և տնտեսական գործունեության մեջ:

Դաշտային աշխատանքների արդյունքում իրականացվել է նաև կազմակերպություններում


աշխատողների կրթական մակարդակների և զբաղեցրած պաշտոնների համապատասխանությունների վերլուծություն, որոնք ռեսպոնդենտները գնահատել են 1-10 բալանային համակարգով՝ բացահատելու համար կրթություն-աշխատաշուկա հնարավոր խնդիրները: Ընդհանուր առմամբ, զձապատկեր 8-ում առկա տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հարցմանը մասնակցած կազմակերպությունների 3.2%-ը ցածր (1-4 միավոր) է գնահատել իրենց աշխատակիցների կրթական մակարդակների և զբաղեցրած պաշտոնների համապատասխանությունը: Հարցման մասնակցած կազմակերպությունների 33.4%-ը միջին է գնահատել այս ցուցանիշը (5-7 միավոր), իսկ 63.4%-ը բարձր (8-10 միավոր):



Պատկեր 6. Կազմակերպությունների աշխատակիցների կրթական մակարդակի և զբաղեցրած պաշտոնի համապատասխանությունը

Մյուս կողմից, հատկանշական է, որ իրենց աշխատակիցների կրթական մակարդակների և զբաղեցրած պաշտոնների համապատասխանությունը ցածր և միջին գնահատած կազմակերպությունների մոտ 68.5%-ը գործունեություն են ծավալել ՀՀ մարզերում: Ստացվում է, որ ՀՀ մարզերում գործող կազմակերպությունների մոտ կրթություն-աշխատաշուկա կապի խզման խնդիրներն առավել ցայտուն են: Ընդ որում, ցածր և միջին գնահատականները հատկապես գերակշռում են Երևանին մոտ գտնվող մարզերում՝ Արմավիրում, Արարատում ու Կոտայքում: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ այս մարզերից ներքին միգրացիան դեպի Երևան՝ հատկապես բարձրագույն, հետբուհական կրթություն ունեցող մասնագետների շրջանում բավական բարձր է: Մյուս կողմից, Մյունիքի, Լոռու և Շիրակի մարզերում կազմակերպությունները ընդգծված բարձր են գնահատել իրենց աշխատակիցների կրթական մակարդակների և զբաղեցրած պաշտոնների համապատասխանությունը:

Դաշտային աշխատանքների արդյունքում բացահայտվել է նաև ըստ ՀՀ վարչատարածքային միավորների աշխատուժի հավելյալ պահանջարկը, որը դիտարկվել է 2024 թվականի հուլիս ամսվա դրությամբ դաշտային աշխատանքներին մասնակցած կազմակերպություններում անհրաժեշտ աշխատողների թվաքանակն՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և կրթական մակարդակների: Ընդհանուր առմամբ, 2024 թվականի հուլիս ամսին դաշտային աշխատանքներին մասնակցած կազմակերպություններում աշխատուժի հավելյալ պահանջարկը կազմել է 17589 մարդ, որը կազմում է ընթացիկ պահանջարկի 9%-ը: Ընդ որում, աշխատուժի հավելյալ պահանջարկի (17589 աշխատող) 69.2%-ը կամ 12172 մարդ արձանագրվել է Երևանում: Տեսակարար կշիռը հավելյալ պահանջարկ ունեցող հաջորդը Կոտայքի մարզն է, որտեղ առկա է եղել 1038 նոր աշխատողի կարիք:




Պատկեր 7. ՀՀ աշխատուժի հավելյալ պահանջարկն ու դրա բաշխվածությունն ըստ վարչատարածքային միավորների

Հետաքրքիր է նաև ուսումնասիրել դաշտային աշխատանքներին մասնակցած կազմակերպություններում աշխատուժի հավելյալ պահանջարկի տեսակարար կշիռն ընթացիկ պահանջարկի մեջ՝ ըստ վարչատարածքային միավորների: Այս պարագայում ստացվել է, որ ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Վայոց ձորի մարզում (23.1%): Երևանում աշխատուժի հավելյալ պահանջարկի և ընթացիկ պահանջարկի հարաբերակցությունը կազմել է 8.4%: Այս առումով, աշխատուժի հավելյալ պահանջարկի ընթացիկ պահանջարկի հարաբերակցությունը

բավական հետաքրքիր ազդակներ է հաղորդում:

Ըստ կրթական մակարդակների՝ աշխատուժի հավելյալ պահանջարկի վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ գործատուների՝ 17589 հավելյալ պահանջարկի մեջ 51.8% կամ 9117 մարդու անհրաժեշտ է ունենալ բարձրագույն և հետբուհական կրթություն, 20.4% կամ 3596 մարդու՝ միջին մասնագիտական, 14.7% կամ 2585 մարդու՝ նախամասնագիտական (արհեստագործական), իսկ 13% կամ 2291 մարդու՝ հիմնական և/կամ միջնակարգ կրթական մակարդակ:




Գծապատկեր 7. Կազմակերպություններում աշխատուժի հավելյալ պահանջարկի և ընթացիկ պահանջարկի հարաբերակցությունը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների (%)


Համաձայն գծապատկեր 8-ի տվյալների վերլուծության Երևանում բարձրագույն հետբուհական կրթություն ունեցողների հավելյալ պահանջարկը կազմել է 7181 աշխատող, որը Երևանի հավելյալ պահանջարկի մոտ 59%-ն է: Երևանում բավական ցածր է հիմնական և/կամ միջնակարգ կրթական մակարդակ ունեցող աշխատողների հավելյալ պահանջարկը, որը կազմել է Երևանի պահանջարկի 9%-ը կամ 1095 աշխատող: Միջին մասնագիտական կրթություն ունեցողների հավելյալ պահանջարկը Երևանում կազմել է 17% կամ 2069 աշխատող, իսկ նախամասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողներինը 15% կամ 1826 աշխատող:

Ընդհանուր առմամբ, ընթացիկ և հավելյալ պահանջարկների համեմատությունը ՀՀ վարչատարածքային միավորներում ի հայտ է բերում հետևյալ առանձնահատկությունը: Ընթացիկ պահանջարկի վերլուծությունը ցույց է տալիս, որ


նախամասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողները կազմել են տվյալ վարչատարածքային միավորի միջինը 6%-ը, իսկ հավելյալ պահանջարկի պարագայում 15%-ը: Սա նշանակում է, որ ՀՀ վարչատարածքային միավորներում միջինը 9%-ային կետով ավել նախամասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողների անհրաժեշտություն կա: Հիմնական և/կամ միջնակարգ կրթական մակարդակ ունեցողների ընթացիկ պահանջարկը վարչատարածքային միավորներում կազմել է միջինը 22%, իսկ հավելյալ պահանջարկը՝ միջինը 34%, հետևաբար այս կրթական մակարդակի պարագայում միջինը 12%-ային կետով ավել աշխատողների անհրաժեշտություն կա:




Փձապատկեր 8. Կազմակերպություններում աշխատողի հավելյալ պահանջարկն ըստ կրթական մակարդակների << վարչատարածքային միավորներում (մարդ)



Փձապատկեր 9. Կազմակերպություններում աշխատողի հավելյալ պահանջարկի տեսակարար կշիռներն՝ ըստ կրթական մակարդակների << վարչատարածքային միավորներում



Պձապատկեր 10. ՀՀ աշխատուժի ընդհանուր պահանջարկն ու դրա բաշխվածությունն ըստ վարչատարածքային միավորների




Պձապատկեր 11. Կազմակերպություններում աշխատուժի ընդհանուր պահանջարկն ըստ կրթական մակարդակների ՀՀ վարչատարածքային միավորներում (մարդ)

Այսպիսով, աշխատուժի ընթացիկ և հավելյալ պահանջարկների վերլուծության արդյունքում, հնարավոր է հաշվարկել նաև աշխատուժի ընդհանուր պահանջարկը (աշխատուժի ընթացիկ և հավելյալ պահանջարկների հանրագումարը), ինչը 2024 թվականի հուլիս ամսվա դրությամբ կազմել է 213020 աշխատող, որոնց 47.8% կամ 101841 մարդ՝ բարձրագույն, հետբուհական, 26% կամ 55333 մարդ՝ միջին մասնագիտական, 6%-ը կամ 12745 մարդ՝ նախամասնագիտական (արհեստագործական), իսկ 20.2%-ը կամ 43102 մարդ՝ հիմնական և/կամ միջնակարգ կրթական մակարդակներով:

Աշխատուժի ընդհանուր պահանջարկի վերլուծությունը ցույց է տալիս, որ 213020 աշխատողների ընդհանուր պահանջարկի 73.8% կամ 157211 աշխատող արձանագրվել է Երևանում: Երևանը հանած << մնացած վարչատարածքային միավորներում բախշվել է աշխատուժի ընդհանուր պահանջարկի միջինը

2.6%-ը կամ 5581 աշխատող: Ընդ որում, Երևանից հետո ամենամեծ տեսակարար կշիռն ունի Կոտայքի մարզը՝ 5% կամ 10616 աշխատող, ապա Շիրակի մարզը՝ 3.4% կամ 7225 աշխատող: Աշխատուժի ընդհանուր պահանջարկի բաշխվածության առումով ամենացածր տեսակարար կշիռ ունեցող մարզերն են Վայոց ձորի (0.8% կամ 1685 աշխատող) և Տավուշի (1.5% կամ 3143 աշխատող) մարզերը:

Ստացվել է, որ Երևանում աշխատուժի ընդհանուր պահանջարկը կազմել է 157211 աշխատող, որոնց 52.5%-ի կամ 82601 մարդու դեպքում անհրաժեշտ է բարձրագույն կրթություն, 25.3%-ի կամ 39799 մարդու դեպքում՝ միջին մասնագիտական, 5.8%-ի կամ 9078 մարդու դեպքում՝ նախամասնագիտական (արհեստագործական), իսկ 16.4%-ի կամ 25752 մարդու դեպքում՝ հիմնական և/կամ միջնակարգ կրթական մակարդակ:



Գծապատկեր 12. Կազմակերպություններում աշխատուժի ընդհանուր պահանջարկի տեսակարար կշիռներն՝ ըստ կրթական մակարդակների << վարչատարածքային միավորներում

Այսպիսով, Հայաստանի աշխատանքի շուկայում առկա է առաջարկի և պահանջարկի խրոնիկ անհավասարակշռություն, որը հատկապես սուր է դրսևորվում աշխատուժի որակավորման մակարդակի և աշխատանքի շուկայում հմտությունների ու կարողությունների անհամապատասխանության համատեքստում: Ընդհանուր առմամբ, աշխատուժի որակավորումների և աշխատանքի շուկայի անհամապատասխանությունների վերացումը՝ կարողությունների զարգացման և հմտությունների կատարելագործման միջոցով Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման առանցքային նախապայմաններից է:

Օգտագործված գրականության ցանկ

1. << Վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարան՝ <https://armstat.am/am/?nid=964> մուտք՝ 03.09.2024 թ.
2. << Վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարան՝ <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb> մուտք՝ 03.09.2024 թ.

Տժանա/Հանձնվել է՝ 04.02.2025
 Рецензирована/Գրախոսվել է՝ 11.02.2025
 Принята/Ընդունվել է՝ 18.02.2025